«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Ռուս-Հայկական համալսարանի
Ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

_____Է.Մ. Սանդոյան

«03» հունիսի 2026 թ.

ԿԱՐԾԻՔ

Հենրիկ Համլետի Մանուկյանի «Բանկային համակարգի թվային փոխակերպման արդի գործընթացները և դրանց կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Ռուս-Հայկական համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ու «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնների 2026 թվականի հունիսի 03-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 10-26):

Մասնակցում էին՝
Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Ոսկանյան Մարիամ Համբարձումի**՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր, «Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ, **Պետրոսյան Իրինա Բորիսի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնի վարիչ, **Ներսեսյան Կարեն Վասիլիի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Չախոյան Էլիզա Միքայելի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Գալստյան Անի Համլետի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Թուրյան Կարեն Վլադիմիրի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Հայրապետյան Վիկտորիյա Լեոնիդի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Կարապետյան Էդգար Գագիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Սարգսյան Ռուզաննա Աշոտի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Տիգրանյան Վարսիկ Իշխանի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Մնացականյան Լիդա Արմենի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Խաչատրյան Հովակիմ Խաչիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ **(գրախոսող)**, **Հանիսյան Հրայր Հովիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ **(գրախոսող)**, **Հակոբյան Էսթեր Աշոտի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հակոբյան Արմինե Արզումանի**՝ ավագ դասախոս, **Ավետիսյան Լարիսա Աշոտի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Պետրոսյան Գարիկ Արմենակի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Պետրոսյան Հեղինե Գագիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Ստեփանյան Իվետա Կարենի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Սիմոնայնա Ռամելա Ակսելի**՝ ավագ դասախոս, **Կարապետյան Անուշ Արմենի**՝ ավագ դասախոս, **Պապյան Զինավարդ Կարենի**՝ դասախոս, **Շմավոնյան Էլեն Հակոբի**՝ ասիստենտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նորօրյա իրականությունում ֆինանսական համակարգի զարգացման կարևորագույն ուղղություններից է թվային փոխակերպումը, որը վերջին տարիներին դարձել է ֆինանսական հաստատությունների ռազմավարական զարգացման և մրցունակության պահպանման հիմնասյուններից մեկը: Բանկային համակարգի պարագայում թվային տեխնոլոգիաների կիրառությունը հնարավորություն է ստեղծում ինչպես բարելավելու ներքին գործառնական գործընթացները, այնպես էլ բարձրացնելու հաճախորդներին մատուցվող ծառայությունների որակը, ընդլայնելու ֆինանսական ծառայությունների հասանելիությունը, ինչպես նաև բարելավելու ռիսկերի կառավարման ներքին համակարգերը:

Միևնույն ժամանակ, թվային փոխակերպումը բանկերի համար չի սահմանափակվում առանձին տեխնոլոգիական լուծումների ներդրմամբ: Այն ենթադրում է բանկի բիզնես մոդելի, կազմակերպական մշակույթի, աշխատաոճի և գործընթացների համապարփակ վերափոխում: Ռազմավարական նշանակություն ունեցող այս ներդրումները բանկերից պահանջում են լայնամասշտաբ փոփոխություններ կառավարելու ճկունություն և հմտություններ: Թեմայի արդիականությունն առավել ակնհայտ է դառնում ֆինանսական շուկաներում նոր մրցակցային իրողությունների ձևավորման պայմաններում: Մասնավորապես, ֆինտեխ և բիգտեխ ընկերությունների մուտքը ֆինանսական ծառայությունների ոլորտ փոխում է ավանդական բանկային գործունեության տրամաբանությունը՝ առաջացնելով ինչպես նոր հնարավորություններ, այնպես էլ էական մարտահրավերներ: Տեխնոլոգիական զարգացումներից բխող կառուցվածքային փոփոխությունները կարող են ազդել բանկերի եկամտաբերության աղբյուրների, հաճախորդների հետ հարաբերությունների կառավարելու ունակությունների վրա՝ վերջնարդյունքում ազդելով բանկի բիզնես մոդելի կայունության վրա: Ուստի բանկերի կողմից ժամանակին և համարժեք թվային փոխակերպման իրականացումը դառնում է բանկային համակարգի կայուն զարգացման կարևոր նախապայման:

Թվային փոխակերպման գործընթացներում բանկային վերահսկողության ներգրավվածության անհրաժեշտության մասին է վկայում նաև միջազգային փորձը: Այսպես, օրինակ, Եվրոպական կենտրոնական բանկը վերջին տարիներին ուշադրություն կենտրոնում է պահում բանկերի թվայնացման, տեխնոլոգիական զարգացումներից բխող ռիսկերի և դրանց կառավարման խնդիրները:

Հայաստանի Հանրապետության համար բանկերի թվային փոխակերպման կառավարումն ունի առանձնահատուկ գիտագործնական նշանակություն: ՀՀ-ում թվայնացման օրակարգի, պետական ռազմավարական առաջնահերթությունների, բաց բանկինգի և ֆինանսական

տեխնոլոգիաների զարգացման պայմաններում բանկերը հանդես են գալիս որպես թվային փոխակերպման առանցքային դերակատարներ: Միաժամանակ բանկային համակարգի թվային զարգացման անհամաչափությունը, տեխնոլոգիական ներդրումների կառավարման բարդությունը և նոր մրցակցային միջավայրում բանկերի դիրքավորման անհրաժեշտությունը առաջ են բերում վերահսկողական պրակտիկայի համընթաց կատարելագործման պահանջ:

Ատենախոսության արդիականությունը բխում է վերոնշյալ հանգամանքներից, բանկերի թվային փոխակերպման գործող վերահսկողական պրակտիկան արդիական տեսամեթոդական գործիքների միջոցով կատարելագործելու պահանջից՝ միաժամանակ ապահովելով գործող համակարգերի և դրանց վերաբերյալ տեսլականի հետ ներդաշնակություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության հիմնական նպատակն է գիտականորեն հիմնավորված միջազգային լավագույն փորձի ներդրմամբ բարելավել ՀՀ ԿԲ-ում բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման վերահսկողական համակարգը՝ հաշվի առնելով ՀՀ ԿԲ և ՀՀ բանկային համակարգի առանձնահատկությունները: Այս նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել թվային փոխակերպման հասկացությունը վերահսկողական գնահատումների տեսանկյունից, մասնավորապես՝ թվային փոխակերպման շարժիչ ուժերը, մակարդակները (տարատեսակները), դրսևորումները բանկային համակարգում, ապագա զարգացումների հավանական սցենարները և դրանցից բխող ռիսկերը, ինչպես նաև դրա կառավարումը կենտրոնական բանկերի կողմից,
- մշակել գիտականորեն հիմնավորված, բանկերի թվային փոխակերպման կառավարման վերահսկողական գնահատման մոդել՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի, գրականության ուսումնասիրության և գիտական մեթոդաբանական քայլերի վրա,
- ուսումնասիրել թվային փոխակերպման արդի գործընթացները ՀՀ-ում և գնահատել դրանց ազդեցությունը բանկային համակարգի վրա՝ բանկային համակարգի տեխնոլոգիական զարգացումների վերաբերյալ պատկերացում ձևավորելու համար,
- խմբավորել ՀՀ առևտրային բանկերն ըստ թվային փոխակերպման շարժիչ ուժերի նկատմամբ իրենց զգայունության և հավանական ազդեցության՝ նպաստելով վերահսկողական ռեսուրսների բաշխման արդյունավետության բարձրացմանը,
- ուսումնասիրել ՀՀ բանկային կարգավորման և վերահսկողության ընթացիկ

պրակտիկան բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման կառավարման համատեքստում՝ մշակված մոդելի ներդրմանը խոչընդոտող խնդիրները վեր հանելու համար,

- մշակել առաջարկներ ՀՀ ԿԲ-ի կողմից բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման գնահատման վերահսկողական համակարգի բարելավման ուղղությամբ, ինչպես նաև առաջարկել բացահայտված խնդիրների լուծման ուղիներ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակներում ստացվել են մի շարք արդյունքներ, որոնցից ըստ ատենախոսի գիտական նորույթ են պարունակում հետևյալները.

1. Մշակվել է բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման վերահսկողական գնահատման մոդելը՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի և թեմային առնչվող գրականության ուսումնասիրության վրա, և կիրառելով կառավարման գիտության մեջ տեսության մշակման մեթոդաբանություն:
2. Գնահատվել է ՀՀ բանկային համակարգի վրա թվային փոխակերպման գործընթացների ազդեցությունը՝ հիմնվելով թեմատիկ վերլուծության մեթոդաբանության և հիմնավորված տեսության մեթոդաբանական տարրերի վրա:
3. Մշակվել է բանկերի խմբավորման նոր մեթոդ, որի հիմնական տարբերությունը գոյություն ունեցող այլ մեթոդներից կայանում է թվային փոխակերպման ռազմավարական ռիսկի նկատմամբ զգայունությունն արտացոլող երկու նոր ֆինանսական գործակիցների ներառման մեջ, որոնք մշակվել են՝ հաշվի առնելով ապագա ֆինտեխ զարգացումների տարբեր սցենարներ:
4. Մշակված նոր մեթոդաբանությամբ ՀՀ բանկերը խմբավորվել են ըստ թվային փոխակերպման ռազմավարական ռիսկի նկատմամբ զգայունության և դրանց հավանական ազդեցության, որը կարող է օգտակար լինել վերահսկողական ռեսուրսների բաշխման արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից:
5. Մշակվել են ՀՀ-ում բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման վերահսկողական գնահատման համակարգի բարելավմանն ուղղված առաջարկներ, որոնց ներդրման արդյունքում ակնկալվում է բանկերի ռազմավարական ռիսկի կառավարման բարելավում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Բանկային համակարգի թվային փոխակերպման գործընթացների ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը»** գլխում ուսումնասիրվել են թվային փոխակերպման տեսական և մեթոդաբանական հիմքերը, դրա շարժիչ ուժերը, հիմնական տարատեսակները և դրսևորումները բանկերում: Անդրադարձ է կատարվում ֆինանսներում տեխնոլոգիական զարգացումներին, ապագա հնարավոր սցենարներին և դրանցից բխող ռիսկերին: Սույն գլխում քննարկվել են նաև բանկերի թվային փոխակերպման նկատմամբ կենտրոնական բանկերի մոտեցումները՝ տարանջատելով բանկային կարգավորման և վերահսկողության դերը թվային փոխակերպման կառավարման համատեքստում: Վերջում, միջազգային լավագույն փորձի, ակադեմիական գրականության և կառավարման գիտության մեջ տեսության մշակման մեթոդաբանական մոտեցումների հիման վրա մշակվել է բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման վերահսկողական գնահատման (ԹՓՎԳ) մոդելը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հայաստանի Հանրապետությունում բանկային համակարգի թվային փոխակերպման կառավարման հիմնախնդիրները»** գլխում ուսումնասիրվել են ՀՀ-ում թվային փոխակերպման արդի գործընթացները և դրանց ազդեցությունը բանկային համակարգի զարգացման վրա: Հեղինակը, կիրառելով թեմատիկ վերլուծության մեթոդաբանություն և հիմնավորված տեսության տարրեր, առանձնացրել է այն հիմնական ուղղությունները, որոնք բնութագրում են ՀՀ թվային օրակարգի, ֆինանսական համակարգի տեխնոլոգիական զարգացման և բանկերի թվային վերափոխման փոխկապվածությունը: Վերլուծության արդյունքում ընդգծվել է, որ ՀՀ բանկային համակարգի համար թվային փոխակերպումը միաժամանակ հանդիսանում է զարգացման հնարավորություն և ռազմավարական ռիսկի աղբյուր: Այնուհետև, առաջարկվել է նաև ՀՀ առևտրային բանկերի խմբավորման մեթոդ, որը հաշվի է առնում տեխնոլոգիական զարգացումներից բխող սպառնալիքների նկատմամբ բանկերի զգայունությունը՝ կիրառելով մեքենայական ուսուցման մեթոդներ: Խմբավորման նպատակն է նպաստել ռիսկերի վրա հիմնված վերահսկողության շրջանակում վերահսկողական ռեսուրսների առավել նպատակային և համաչափ բաշխմանը:

Վերջում, իրականացվել է մշակված ԹՓՎԳ մոդելի համադրություն ՀՀ բանկային կարգավորման, ՀՀ կենտրոնական բանկի գործող վերահսկողական պրակտիկայի և ռազմավարական տեսլականի հետ: Վերլուծության արդյունքում բացահայտվել են հիմնական խնդիրները և բացերը, որոնք հաստեագրվում են հաջորդ գլխում ձևակերպված առաջարկների միջոցով:

Ատենախոսության երրորդ՝ **«Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի թվային փոխակերպման կառավարման բարելավման ուղիները»** գլխում ձևակերպվել են ՀՀ-ում բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման վերահսկողական գնահատման համակարգի կատարելագործման առաջարկները: Վերջիններս վերաբերում են թվային փոխակերպման նկատմամբ վերահսկողական քաղաքականության հստակեցմանը, բանկերի թվային փոխակերպման ներհատուկ ռիսկի գնահատման մոտեցումների բարելավմանը և թվային փոխակերպման ռիսկերի կառավարման գնահատման մեջ մշակված ԹՓՎԳ մոդելի տեղայնացված տարբերակի կիրառմանը: Ակնկալվում է, որ առաջարկները կնպաստեն բանկերի ռազմավարական ներդրումների կառավարման արդյունավետության բարձրացմանը, տեխնոլոգիական զարգացումների համատեքստում բանկային համակարգի մրցակցային դիրքի ամրապնդմանը, ինչը կամրապնդի բանկերի բիզնես մոդելի կայունությունը:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հետազոտության արդիականության հիմնավորման մեջ նպատակահարմար կլիներ առավել հստակ ներկայացնել հետազոտության գիտական բացը և այն տեղավորել թեմային առնչվող միջազգային գիտական գրականության ուսումնասիրության մեջ: Դա հնարավորություն կտար առավել համոզիչ կերպով հիմնավորել աշխատանքի ինքնուրույն գիտական ներդրումը և ընդգծել դրա արժեքը ոչ միայն կիրառական, այլև գիտական նոր գիտելիքի ձևավորման տեսանկյունից:

2. Հետազոտության տեսական հիմնավորումը կարող էր առավել ամբողջական դառնալ, եթե լրացուցիչ պարզաբանվեր թվային փոխակերպման տեղն ու դերը ռիսկերի ընդհանուր համակարգում՝ մասնավորապես, դրա հարաբերակցությունը բիզնես մոդելի, տեխնոլոգիական և մրցակցային ռիսկերի հետ, ինչպես նաև նկարագրվեին առանձնացված գնահատման մոտեցման կիրառման հնարավոր առավելությունները վերահսկողական պրակտիկայի տեսանկյունից:

3. Կիրառված մեթոդաբանական գործիքակազմը ներառում է «grounded theory»-ի տարրեր, «thematic analysis», «bricolage» և «clustering» մեթոդներ, սակայն նպատակահարմար

կլիներ առավել հստակ ներկայացնել դրանց ինտեգրման միասնական տրամաբանությունը հետազոտական դիզայնի շրջանակում: Մասնավորապես, անհրաժեշտ է պարզաբանել յուրաքանչյուր մեթոդի կիրառման նպատակը, հետազոտական առանձին խնդիրների լուծման մեջ դրանց դերակատարությունը և մեթոդների փոխկապակցվածությունը՝ ապահովելու համար մեթոդաբանական ամբողջականության և ներքին համահունչության ավելի բարձր աստիճան:

4. Քանի որ առաջարկվող մոդելի ձևավորման հիմքում դրված են միջազգային լավագույն փորձը և առկա գիտական մոտեցումները, նպատակահարմար կլիներ առավել հստակ սահմանազատել ադապտացիոն և ինքնուրույն գիտական բաղադրիչները: Այս համատեքստում կարևոր է բացահայտել, թե առաջարկվող մոդելը ինչ նոր տեսական, մեթոդաբանական կամ վերլուծական արժեք է ստեղծում առկա շրջանակների համեմատությամբ և ինչ հիմքով է այն ներկայացվում որպես ինքնուրույն գիտական մոդել:

5. Գիտական նորույթի 3-րդ կետում օգտագործված «նոր մեթոդ» ձևակերպումը կարող է հավելյալ հիմնավորման կարիք ունենալ, քանի որ հետազոտությունում կիրառվել են «clustering»-ի ճանաչված ալգորիթմական մոտեցումներ: Ուստի նպատակահարմար կլիներ առավել հստակ ներկայացնել՝ գիտական ներդրումը կայանում է խմբավորման ամբողջությամբ նոր մեթոդի մշակման, թե առկա մեթոդաբանության՝ թվային փոխակերպման ռազմավարական ռիսկն արտացոլող նոր ֆինանսական գործակիցներով հարստացված և համատեքստային մոդիֆիկացման մեջ:

6. Ատենախոսության գիտական նորույթը նկարագրող մասում ներկայացված բոլոր հինգ դրույթները հավասարապես չեն արտահայտում ինքնուրույն գիտական նորույթի հատկանիշներ, ուստի նպատակահարմար կլիներ առավել հստակ տարբերակել գիտական նորույթները և հետազոտության արդյունքում ստացված կիրառական կամ մեթոդաբանական արդյունքները: Մասնավորապես, որոշ կետեր առավելապես բնութագրում են մշակված առաջարկները կամ կիրառված մեթոդաբանության արդյունքները, քան նոր տեսական կամ մեթոդաբանական գիտելիքի ստեղծումը:

7. Չնայած աշխատանքում քննարկվում են թվային փոխակերպման ռազմավարական և բիզնես մոդելի ռիսկերը, սահմանափակ է անդրադարձը թվային բանկինգին բնորոշ գործառնական և կիբեռանվտանգության այն ռիսկերին, որոնց հետևանքով հաճախորդների հաշիվները կարող են դառնալ ֆինանսական խարդախությունների կամ չարտոնված միջամտությունների թիրախ: Նման ռիսկերի ներառումը կարող էր առավել ամբողջական դարձնել թվային փոխակերպման ռիսկային միջավայրի գնահատումը:

8. Հետազոտության երկրորդ գլխում բանկերի կլաստերիզացիան դիտարկվում է որպես թվային փոխակերպման ռազմավարական ռիսկի նկատմամբ զգայունության գնահատման

գործիք: Այս համատեքստում, ի՞նչ գիտական հարց է լուծվում տվյալ մոտեցման միջոցով, ինչպես նաև ի՞նչ մեթոդաբանական տրամաբանությամբ են ընտրվել կիրառված ցուցանիշները, սցենարային հավանականությունները և զգայունության դրույքները:

9. Առաջարկվող վերահսկողական գնահատման մոդելը մշակվել է առկա գրականության, միջազգային փորձի և ներկայիս տեխնոլոգիական միջավայրի ուսումնասիրության հիման վրա: Արագ փոփոխվող թվային և ֆինտեխ միջավայրում մոդելի հնարավոր արագ հնացման կամ սահմանափակ կիրառելիության տեսանկյունից, ի՞նչ մեխանիզմներով կարելի է ապահովվել դրա շարունակական արդիականացումը:

10. Ատենախոսության տարբեր գլուխներում ստացված տեսական և էմպիրիկ արդյունքների հիման վրա ձևակերպված վերահսկողությանը վերաբերվող առաջարկությունների պարագայում ինչպե՞ս է ապահովվել եզրակացությունների և առաջարկությունների միջև մեթոդաբանական շարունակականությունն ու պատճառահետևանքային կապը, և ինչո՞վ է հիմնավորվում դրանց միասնական կիրառական տրամաբանությունը:

11. Ատենախոսության «Հետազոտության գիտական նորույթը և հիմնական գիտական արդյունքները» մասի առաջին կետում նշվում է, որ *«Մշակվել է բանկերի բիզնես մոդելի թվային փոխակերպման վերահսկողական գնահատման մոդելը՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի, և թեմային առնչվող գրականության ուսումնասիրության վրա, և կիրառելով կառավարման գիտության մեջ տեսության մշակման մեթոդաբանություն»:*

Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը ներկայացներ թվային փոխակերպման գնահատման մոդելի ներդրման հնարավորությունը և ազդեցությունը ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ով սահմանված բանկերի գործունեության կարգավորման հիմնական տնտեսական նորմատիվների վրա: Միաժամանակ թվային փոխակերպման իրականացման գործընթացը ինչպիսի՞ փոփոխությունների պահանջներ կարող է առաջ բերել կապիտալի համարժեքության, իրացվելիության և վարկային ռիսկը զսպող տնտեսական նորմատիվների հաշվարկման մեխանիզմներում:

12. Ատենախոսության հետազոտության գիտական նորույթը և հիմնական գիտական արդյունքները մասի երրորդ կետում նշվում է, որ *«Մշակվել է բանկերի խմբավորման նոր մեթոդ, որի հիմնական տարբերությունը գոյություն ունեցող այլ մեթոդներից կայանում է թվային փոխակերպման ռազմավարական ռիսկի նկատմամբ զգայունությունն արտացոլող երկու նոր ֆինանսական գործակիցների ներառման մեջ, որոնք մշակվել են հաշվի առնելով ապագա ֆինտեխ զարգացումների տարբեր սցենարներ»:*

Աշխատանքը կշահեր, եթե այդ երկու ֆինանսական գործակիցներից բացի աշխատանքում դիտարկվեին այլ գործակիցներ, օրինակ՝

- Եկամտաբեր ակտիվներ/ակտիվներ,
- Զուտ տոկոսային եկամուտ/եկամտաբեր ակտիվներ.
- Վարկային ներդրումներ/ակտիվներ,
- Արժեթղթեր/ակտիվներ,
- Հիմնական միջոցներ/ ակտիվներ.
- Ոչ նյութական ակտիվներ/ ակտիվներ
- Զուտ տոկոսային եկամուտ/եկամտաբեր ակտիվներ.
- Զուտ տոկոսային և ոչ տոկոսային եկամուտ/ընդհանուր ակտիվներ.
- Զուտ տոկոսային + ոչ տոկոսային եկամուտ/ ոչ տոկոսային ծախսեր.
- Ծախսեր/եկամուտներ:

Միաժամանակ, բանկերի շահութաբերության գնահատման տեսանկյունից անհրաժեշտ էր վերլուծել բանկային համակարգի եկամտաբերության որակը, գնահատել ակտիվների որակը (չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում) և ակտիվների գծով հնարավոր պահուստների մեծությունը, ինչպես նաև կատարել ստորև նշված հարաբերակցությունների վերլուծություններ՝

- Չաշխատող վարկեր/վարկային ներդրումներ,
- Ոչ եկամտաբեր ակտիվներ/ընդհանուր ակտիվներ,
- Վարկային ռիսկի արժեք= վարկային պահուստներ/վարկային ներդրումներ,
- Վարկերի գծով պահուստ/չաշխատող ակտիվներ:

Հարկ է նշել, որ ատենախոսության 2.2.2. կետում նշված ՀՀ բանկերի ֆինանսական տարրերի միջին կշռված զգայունության դրույքները և սցենարի իրագործման հավանականությունը տոկոսային արտահայտությամբ ենթադրյալ են և սցենարային վերլուծությունների իրականացման տեսանկյունից թերի են:

13. Ատենախոսության հետազոտության «Գիտական նորույթը և հիմնական գիտական արդյունքները» մասի չորրորդ կետում նշվում է, որ *«Մշակված նոր մեթոդաբանությամբ ՀՀ բանկերը խմբավորվել են ըստ թվային փոխակերպման ռազմավարական ռիսկի նկատմամբ զգայունության և դրանց հավանական ազդեցության, որը կարող է օգտակար լինել վերահսկողական ռեսուրսների բաշխման արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից»:* Ատենախոսությունը կշահեր, եթե բանկերը դասակարգվեին, որպես համակարգային նշանակություն ունեցող բանկեր և սահմանվեին ռիսկերի բազմազանեցման (դիվերսիֆիկացիայի) ավելի բարձր պահանջներ՝ ավելի դինամիկ հիմնական տնտեսական

նորմատիվներ՝ օրինակ բանկային համակարգի ընդհանուր ակտիվների, վարկային ներդրումների, պարտավորությունների և ընդհանուր կապիտալի 20 և ավելի տոկոս մեծությունը գերազանցող ակտիվներ, պարտավորություններ, վարկային ներդրումներ և ընդհանուր կապիտալ ունեցող բանկերը դիտարկվեին որպես համակարգային նշանակություն ունեցող բանկեր՝ սահմանելով կապիտալի համարժեքության, իրացվելիության և վարկային ռիսկը զսպող ավելի խիստ հիմնական տնտեսական նորմատիվներ, քան սահմանված են այլ բանկերի համար: Դա թույլ կտար ՀՀ կենտրոնական բանկի կողմից թիրախային և արդյունավետ կերպով կառավարել համակարգային ռիսկերը թվային փոխակերպման համատեքստում:

Միաժամանակ ատենախոսության 2.2.3. կետում ներկայացվում է ՀՀ բանկերի խմբավորումն ըստ թվային փոխակերպման մարտահրավերների նկատմամբ զգայունության, ըստ որի ներկայացվում է խմբավորված բանկերի ակտիվների միջինացված մեծությունը 31.12.2024թ.-ի դրությամբ: Աշխատանքը կշահեր, եթե վերահսկողության ապահովման տեսանկյունից բանկերը խմբավորվեին նաև ըստ՝ ընդհանուր կապիտալի, շահույթի, պարտավորությունների և վարկային ներդրումների մեծությանը, համապատասխանաբար:

14. Հարկ է նշել, որ ատենախոսությունը կշահեր, եթե բանկերի թվային փոխակերպման տեսանկյունից ատենախոսը գնահատեր ՀՀ կենտրոնական բանկի «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ» կարգով սահմանված պահանջների արդյունավետությունը և բանկերում տեղեկատվական անվտանգության ռիսկերի կառավարման գործընթացը, ինչպես նաև ներկայացներ համապատասխան առաջարկներ, բանկերում՝ տեղեկատվական անվտանգության կազմակերպման, գործարար գործընթացների անընդհատության ապահովվման և թեստավորման պահանջների իրականացման վերաբերյալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հենրիկ Համլետի Մանուկյանի «Բանկային համակարգի թվային փոխակերպման արդի գործընթացները և դրանց կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակված են 8 գիտական հոդվածներում, որոնցից մեկը՝ Scopus գիտատեղեկատվական շտեմարանում:

Ատենախոսության սեղմագիրը համարժեքորեն արտացոլում է աշխատանքի բովանդակությունն ու արդյունքները:

Այսպիսով, **Հենրիկ Համլետի Մանուկյանի «Բանկային համակարգի թվային փոխակերպման արդի գործընթացները և դրանց կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝
Ռուս-Հայկական համալսարանի Ռեկտոր,
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Է. Մ. Սանդոյան**

Ռուս-Հայկական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների»
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Մ.Հ. Ոսկանյան**

Ռուս-Հայկական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Ի. Բ. Պետրոսյան**

Ռուս-Հայկական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի
դոցենտ, տնտ. գիտ. թեկնածու՝ **Հ.Խ. Խաչատրյան**

Ռուս-Հայկական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի
դոցենտ, տնտ. գիտ. թեկնածու՝ **Հ.Հ. Հանիսյան**

Ռուս-Հայկական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու՝ **Ռ. Ս. Կասաբաբովա**